



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

17 ապրիլի 2025 թվականի N 444-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի N 1034-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո Ր Ո Շ Մ Ա Ն է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի «Դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի) և ծախսերի փոխհատուցման ծրագիրը հաստատելու մասին» N 1034-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) վերնագրում «ԴԵՂԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻ» բառերը փոխարինել «ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ» բառերով.

2) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հաստատել դեղերի շրջանառության կարգավորման ոլորտում փորձաքննությունների ծախսերի 50 %-ի փոխհատուցման ծրագիրը՝ համաձայն հավելվածի».

3) 3-րդ կետում «գրանցումների և վերագրանցումների» բառերը փոխարինել «դեղերի շրջանառության կարգավորման ոլորտում հարաբերությունների» բառերով.

4) հավելվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԾՐԱԳԻՐ

ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ 50 %-Ի ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ».

5) հավելվածի 1-ին կետում «Եվրասիական տնտեսական միության գրանցումների և վերագրանցումների, ռազմավարական նշանակություն ունեցող դեղերի գրանցումների և վերագրանցումների, միայն Հայաստանում կիրառման ենթակա դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի), արտերկրում հայկական արտադրության դեղերի գրանցումների» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում դեղերի գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման, Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի դոսյեի՝ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ ԵԱՏՄ) կանոններին համապատասխանեցման կամ փոխադարձ ճանաչման նպատակով իրականացվող և հետգրանցումային փոփոխությունների փորձաքննությունների, ինչպես նաև միայն Հայաստանի Հանրապետությունում ԵԱՏՄ կարգով գրանցված կամ դոսյեն համապատասխանեցված դեղի այլ երկրների փոխադարձ ճանաչման նպատակով վերափորձաքննության, ԵԱՏՄ կարգով գրանցման կամ վերագրանցման (ռեֆերենտ երկիր) նպատակով իրականացվող փորձաքննության, հավաստագրի ժամկետի երկարաձգման, հետգրանցումային փոփոխությունների, յուրաքանչյուր հաջորդ արտադրատարածքի (արտադրատարածքների) կամ նոր ցուցման գրանցման, հետգրանցումային փոփոխության փորձաքննության, ընդհանուր ընթացակարգով գրանցված կամ ԵԱՏՄ կարգով միայն Հայաստանի Հանրապետությունում կիրառման նպատակով գրանցված դեղի փոփոխության, սպեցիֆիկացիայում ցուցանիշի փոփոխության դեպքում՝ լաբորատոր վճարների (տուրքերի), այլ երկրներում հայկական

արտադրության դեղերի գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման, հետգրանցումային փոփոխությունների, ռազմավարական նշանակության դեղերի շրջանառության կարգավորման ոլորտում» բառերով.

6) հավելվածի 4-րդ կետում «Եվրասիական տնտեսական միության գրանցումների և վերագրանցումների» բառերը փոխարինել «ԵԱՏՄ կարգով դեղերի գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման, հետգրանցումային փոփոխությունների, յուրաքանչյուր հաջորդ արտադրատարածքի (արտադրատարածքների) կամ նոր ցուցման գրանցման, ԵԱՏՄ կարգով ապակենտրոնացված կամ փոխադարձ ճանաչման ընթացակարգով գրանցման (ոչ ռեֆերենտ երկիր), գրանցված դեղի փոփոխության, սպեցիֆիկացիայում ցուցանիշի փոփոխության դեպքում՝ լաբորատոր» բառերով.

7) հավելվածի 5-րդ կետում «գրանցումների և վերագրանցումների» բառերը փոխարինել «գրանցման, վերագրանցման, հավաստագրի ժամկետի երկարաձգման, Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի դոսյեի՝ ԵԱՏՄ կանոններին համապատասխանեցման կամ փոխադարձ ճանաչման նպատակով իրականացվող և հետգրանցումային փոփոխությունների փորձաքննությունների, ինչպես նաև միայն Հայաստանի Հանրապետությունում ԵԱՏՄ կարգով գրանցված կամ դոսյեն համապատասխանեցված դեղի այլ երկրների փոխադարձ ճանաչման նպատակով վերափորձաքննության, գրանցված դեղի փոփոխության, սպեցիֆիկացիայում ցուցանիշի փոփոխության դեպքում՝ լաբորատոր» բառերով, իսկ «550» թիվը՝ «600» թվով.

8) հավելվածի 6-րդ կետում «գրանցումների և վերագրանցումների» բառերը փոխարինել «դեղերի շրջանառության կարգավորման ոլորտում» բառերով.

9) հավելվածի 7-րդ կետում «Արտերկրում հայկական արտադրության դեղերի գրանցումների» բառերը փոխարինել «Այլ երկրներում հայկական արտադրության դեղերի գրանցումների, վերագրանցումների, հավաստագրի ժամկետի երկարաձգման, հետգրանցումային փոփոխությունների» բառերով.

10) հավելվածի 13-րդ կետի 1-ին ենթակետում «արտերկրում հայկական արտադրության դեղերի գրանցումների փորձաքննությունների դեպքում՝ արտերկրում»

բառերը փոխարինել «օրենսդրությամբ գրանցման հավաստագիր նախատեսված չլինելու դեպքում» բառերով, իսկ «հիմնավորող» բառը՝ «հավաստող» բառով.

11) հավելվածի 13-րդ կետի 2-րդ ենթակետում «արտերկրում» բառը փոխարինել «այլ երկրներում» բառերով, իսկ «լիազոր մարմնի հետ կնքված պայմանագրի պատճենը» բառերից հետո լրացնել «կամ լիազոր մարմնի կողմից տրված՝ ծախսերը հիմնավորող այլ փաստաթուղթ» բառերով.

12) հավելվածի 13-րդ կետի 3-րդ ենթակետում «և» բառը փոխարինել «կամ» բառով.

13) հավելվածի NN 1, 2 և 3 ձևերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

« Ձև N 1

**ԴԵՂԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ 50 %-Ի ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ
ՀԱՅՏ**

Կազմակերպության անվանումը և կազմակերպչաիրավական ձևը

ՀՎՀՀ _____

Իրավաբանական անձի գտնվելու վայրը _____

Գործունեության հասցեն _____

Պետական ռեգիստրում գրանցման համարը _____

Հեռախոսահամարը _____

Էլ. փոստի հասցեն _____

Կազմակերպության ղեկավարի

Ա.Ա.Հ. _____

Պաշտոնը _____

Հեռախոսահամարը _____

Էլ. փոստի հասցեն _____

Խնդրում եմ, համաձայն դեղերի շրջանառության կարգավորման ոլորտում փորձաքննությունների վճարների (տուրքերի) և ծախսերի փոխհատուցման ծրագրի՝ տրամադրել ծախսերի փոխհատուցում:

Կից ներկայացնում եմ հետևյալ փաստաթղթերը՝

1) լիազոր մարմնի կողմից տվյալ արտադրանքի համար տրված գրանցման հավաստագրի պատճենը, իսկ օրենսդրությամբ գրանցման հավաստագիր նախատեսված չլինելու դեպքում՝ դեղի գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը.

2) լիազոր մարմնի հետ կնքված պայմանագրի պատճենը կամ լիազոր մարմնի կողմից տրամադրված՝ ծախսերը հավաստող այլ փաստաթուղթ (առկայության դեպքում), իսկ այլ երկրներում հայկական արտադրության դեղերի գրանցումների փորձաքննությունների դեպքում՝ դեղի գրանցումն իրականացնող մարմնի հետ կնքված պայմանագրի պատճենը (առկայության դեպքում).

3) կատարված ծախսերը հավաստող համապատասխան փաստաթղթերի պատճենները (հաշվարկային փաստաթղթի, վճարման անդորրագրի և այլ փաստաթղթերի պատճենները).

4) ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի վկայականի պատճենը.

5) բանկային հաշվեհամար (հավաստող փաստաթուղթ, տեղեկանք).

6) տեղեկություն՝ համաձայն N 2 ձևի.

7) հայտարարություն՝ համաձայն N 3 ձևի.

8) այլ տեղեկություն՝ դիմողի ցանկությամբ:

Առդիր՝ _____ էջ:

Կազմակերպության ղեկավար՝ _____

(պաշտոնը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

«___» _____ 20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Կ. Տ.

Ձև N 2

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Դեղի անվանումը	Դեղի նկարագիրը	Դեղերի շրջանառության կարգավորման ոլորտում փորձաքննության վճարի (տուրքի) կամ ծախսի չափը			Դեղի ռազմավարական նշանակության պարագայում համապատասխան նշանառումը (V)
		Հայաստանի Հանրապետությունում	ԵԱՏՄ կարգով	Այլ երկրներում	

(Աղյուսակի սյունակները լրացվում են ըստ համապատասխանության՝ կախված փորձաքննության տեսակից):

Կազմակերպության ղեկավար՝ _____

(պաշտոնը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

«___» _____ 20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Կ. Տ.

Ձև N 3

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ես՝ _____ ս,

(կազմակերպության ղեկավարի պաշտոնը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

հայտնում և հավաստում են, որ օժանդակություն ստանալու նպատակով հայտի ներկայացման պահի դրությամբ.

1) կազմակերպությունը սնանկության գործընթացում ներգրավված չէ.

2) կազմակերպության նկատմամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ հարուցված վարչական վարույթ առկա չէ.

3) նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չեն եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունն օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) պարտավորվում են իմ կողմից ներկայացված նշված տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում եռօրյա ժամկետում, թղթային տարբերակով կամ secretariat@mineconomy.am էլեկտրոնային փոստի միջոցով, տեղեկացնել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:

Հավաստիացնում են, որ սույն հայտում պարունակվող տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում են, որ որևէ կեղծ փաստաթուղթ կամ տեղեկատվություն ներկայացնելը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

(ստորագրությունը)

20 թ.
(ամսաթիվը, ամիսը)»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան